

1891

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆՊԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԹ

ՅՈՒՆԻՍ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ՀԱՅ - ՎԵՆԵՏ



(Տես յ'էջ 65)

ՆՈՅՆ ժամանակին և խաչակրաց պատմութիւնք
կ'իմացընէն թէ ինչպէս անօգուտ եղան այն ամե-
նայն պատրաստութիւնք, թերուղիղ յօժարութիւնք
և խոստմունք, փռանկաց և Անգղիոյ իրարու հետ ունե-
ցած անողոր և ընդդիմամարտ հակառակութեանց
պատճառաւ, ինչպէս նաև այլ փոքրագոյն պետութեանց յողորդողու-
թեան և տկարութեան. և որոց խիղճ եղաւ այն առթիւ անօգնա-
կան ձգելն ինչ և կորստեան պատճառ տէրութեան Հայոց, որ քրիս-
տոնէութեան մերձագոյն ամուր ապաւէն մ'էր առ այլադեմս, և աս-
պիտական արիութեամբ չփութացին ի սպաս և յօգնականութիւն
յեաին թագուհւոյն Հայոց, որ տակաւին ոչ յուսահատ՝ երեք տա-
րիէն ետքը (1371) կը զրկէր զարքեպիսկոպոսն Տաւրոսի և զՄա-
նուէլ տսպետ՝ հոյ ազգաւ, բայց ծնած ի Գենուա և բնակութեամբն
հաստատուած ի Նէապոլիս, յորդորելով իր մօրը Յովհաննա թա-
գուհւոյն ազգականները, որ փութան յօգնութիւն տատանեալ տա-
նըն Հայոց, որ մերձ էր ի կործանումն և յուր. վասն զի յեաին
թագաւորն Կոստանդին (1363-72) բռնաւոր մը համարուած էր և
ոչ օրինաւոր թագաւոր, ուստի և բռնաւորի և կողոպտողի մահուամբ

մեռաւ. և քանի որ ուրիշ ժառանգ երկցած չէր՝ նոյն Մարիամ դը-
խոյ միւսանգամ ներկայանալով, թագապահ կը դրուէր յողջախո-
հից. և Գրիգոր քահանայապետ կը գրէր (1372 յունուար 22) առ
մայրենի ազգական նորա Փիլիպպոս իշխան Տարենտայ, որ պսակել
տալով զնա ընդ Ոթոնի դքսին Պրունզուիքայ՝ թագաւորեցընէ ի վե-
րայ Հայոց, մինչ տակաւին կենդանի էր, ինչպէս թուի, կոստանդին
բռնաւորն, և որոյ բռնական մահուան կերպը քաջայայտ չէ: Բայց
Լիւզինեան ցեղէն կար ժառանգ թագաւորութեան Հայոց՝ ի վենե-
տիկ մեռնող Պեմունդի եղբայրը, որ տասը տարի յառաջ ետեւէ էր
նոյն թագին, և հիմայ՝ Հայոց պետութեան մահամերձ ճշնաժամուն՝
անոնց հաւատարմաց փափաքաւօք, և ի նոյն իսկ ի Մարիամայ դըխո.
յէ կոչեցաւ յիշեալ Պեմունդի եղբայրը, որդին ճիւղանի և թոռն
Ջապլունի և Ամաւրեայ, Լեւոն Ե կամ Լեւոն վերջին ի թագաւորս
Սիսուանայ և Ռուբինեանց, և վերջին յամենայն թագաւորս Հա-
յոց. որ իր սակաւատե և ի կարճեալ ժամանակի թագաւորու-
թեանն՝ դիտեցաւ զէթ արժանապէս ու փառօք պաշտպանել զյետին
ապաստան և զգահ տէրութեանն զՍիս, և սակաւաձեռն հաւատար-
մօք դիւցազնաբար կռուիլ ընդ բիւրաւորաց Եգիպտացւոց և Հալէպ-
ցւոց, իմաստութեամբ անձնապահ ըլլալ յուրացողաց և ի մատնը-
չաց, արիարար կրել սով և վերս, և վերջապէս խոհականութեամբ՝
յանհնարութեան այլոյ իմիք՝ վսեմութեամբ անձնատուր ըլլալ. թա-
գաւորական սրտով և բարձրագլուխ կրել զշղթայս, երթալ ի բանտ
յեգիպտոս, հաճոյանալ յաչս զոռոզ սուլդանին, կալ արձակօ-
րէն ի դիպահով, և արևմտեան թագաւորաց մտադրութիւնը դարձը-
նել իր վրայ՝ զլիաւորաւն քահանայապետիւ, ու կաստիլիոյ թագաւո-
րին բարեխօսութեամբ՝ եօթնամեայ գերութենէն ազատելով (1382),
և այնուհետեւ թագաւորի անուամբ նաւարկելով, ողջունեց ի Հռո-
դոս զԶապել քեռզուստր իւր, զհարսն կիի Գ, ուստի անցաւ ի վենե-
տիկ, իբրու յօրինաւոր հրաժեշտ ազգի և թագաւորութեան Հայոց՝
յերկդարեան դաշնակցէն՝ ի հասարակապետութենէն վենետկոյ:
Որպիսի օրինակաւ արդեօք տուաւ և սա իւր յետին ողջոյնը՝ յետին
ժառանգին՝ յորոց այնչափ պարզեւազրեր ընդունեցաւ, և մանա-
ւանդ այնքան շահ և այնչափ ոսկի ի փոխարէն արծաթոյն զոր կը
բռնադատուէր զնել ի փողերանոցն արքունի, զայս պէտք է ուսա-
նիլ իր դիւաններէն ու դեռ չյայտնուած պատմագրաց երկասի-
րութիւններէն:

Բայց ի մեկնել Լեւոնի երթալ առ քահանայապետն Հռովմայ
և ապա առ թագաւորս փռանկաց և Անգղիոյ, — յորոց ոչ միայն
մեծարանք և եղբայրաբար աթոռակցութիւն տեսաւ, այլ և գան-
ձըս աւելի քան ի կարճատեւ թագաւորութեանն, թէպէտ և յա-
ւուրս գերութեանն ստիպեցաւ յանձնել գերողին ծանրագնի ոս-

կեղէն թագեր: Ի՞նչ եղաւ նաև ծանօթ թագուհին, մանաւանդ թէ երկու թագուհիքն՝ որ Լեւոնի հետ գերեցան, ներկայ թագուհին՝ իր կինը Մարգարիտ, ի Սուլթանեան տոհմէ, և վերը յիշուած Մարիամը: Առաջինն՝ էրկանը գերութեան ժամանակ վախճանեցաւ, Եգիպտոսի սուլթանաց մայրաքաղաքին մէջ ի Գահիրէ. և այս տղերը գրած ատեննիս, հինգ հարիւր և աւելի տարիներէ վերջը փնտռուեցան իր ոսկերքն ի յատակա տաճարին ուր կը կարծուէր թէ թաղուած ըլլայ, և չգտնուեցան. իսկ նախորդ թագուհին, Կոռիկոսեան պարոնայց արիւն՝ խառնեալ ընդ փրկւապոսի Տարենտեայ, վենետիկոյ յետին թղթակիցն, թէպէտ և առաջնոց հետ զընաց ի գերութիւն, բայց յետոյ ազատութիւն տրուեցաւ իրեն՝ ուղած տեղն երթալու: Սակայն մեծահոգին այն կին՝ որ զիտցաւ պատուով պահպանել զթագն ու հրաժարել ի նպաստ մերձաւոր ժառանգին, իր երկրին ու ժամանակին պարոնայց շատէն աւելի՝ հայրենասիրի պարտքը հատուցանելով, այնուհետեւ չուզեց նայիլ ոչ թէ ի ճաճանչըս թագի, այլ և ոչ յամենայն շուք և փառս աշխարհի. և թէպէտ կրնար Լեւոնի նման մեծամեծար պատիւ և ընդունելութիւն գտնել ի մայրենիս իւր ի Տարենտոն, և ըստ փափուկ սեռին առաւել եւս խանդաղատանօք և գգուանօք մեծարիլ, այլ սիրեց Կոփրետեան թաղը, մանաւանդ թէ զԲրիստոսին. և հետեւելով ընդ հետս վեհագունի այսմ թագաւորաց թագաւորի, երթալ յերուսալէմ. ուր հաւատաւորի սքեմաւ սքողելով զանձն յաշխարհէ և զաշխարհ յինքենէ, քիչ ատենէն փոխադրեցաւ յանմահ թագաւորութիւնն (1377), մինչ Լեւոն Հայոց տէրութեան թագը միւսանգամ ձեռք ձգելու յուսով, — որոյ փոխարէն Մատրիտի թագաւոր կ'անուանէր, — ատլանդական ծովուց վրայ կը յածէր ստէպ՝ Անգղիոյ և փռանկաց թագաւորները իրարու հետ հաշտեցընելու նպատակաւ, յորում յաջողելով կը կարծէր դիտմանն հասնիլ. և գուցէ նոյն յուսով հանգեաւ ի գերեզմանս թագաւորաց փռանկաց ի Ս. Դիոնեսիոս Բարիզու (1393, նոյեմբ. 29):

Այսպիսի եղաւ կատարած զիւանագիտական և վաճառականական յարաբերութեանց Հայոց ընդ վենետաց, յառաջնում պարագայի ծանօթութեան իւրեանց յերեքտասան և չորեքտասան դարս բազմայեղանակ ժամանակի միջին դարուց:



ՀԱՅՔ Ի ՎԵՆԵՏԻԿ

Հայոց թագաւորութեան տեւելուն մինչեւ վերջի տարիները դեռ եւս կը գտնուին Շիրակուտի վճիռք՝ նաւուց երթի կամ չերթալուն ի Հայս. ինչպէս յամս 1363 նոյեմբ 22. — 1373 յուլիս 1. — մաս յիս 25 և դեկտ. 8, որ է նախընթաց ամ բարձման գերութեան Լեւոնի Ե, և յորում կը դադարին երթեւեկք. սրով յայտնի կ'ըլլայ թէ վենետաց Միջերկրական գծով ծովային վաճառականութիւնն ալ խզուեր, կուրացեր և դադրած էր այնուհետեւ. թէպէտ մարթ է կարծել թէ վաճառականք տակաւին շարունակած ըլլան ի ինդիր շահաբեր նիւթոյ, զոր երկու հարիւր տարիներէ ի վեր կը հանէին ի բարեբեր դաշտաց կիլիկիոյ. ուր երբեմն թագաւորանիստ և յետոյ ալ երկրին գլխաւոր քաղաք Սսոյ՝ եզիպտացի կուսակալն ալ ի 1415 ամի կը հրաւիրէր զվենետոս գալ յառևտուր: Յայտնի է ի պատմական աւանդից որ կէս դար ետքը (1473 — 4) վենետք ետեւէ եղան տիրել կիլիկիոյ քանի մի ծովափանց՝ դաշնակցութեամբ ընդ Գարամանս և ընդ Ուզուն Հասանայ՝ ընդդէմ՝ նոր և հզօրացեալ օսմանեան տէրութեան. բայց թէ ի ժամանակին ունեցան թէ ոչ գործակցութիւն ընդ Հայս, մեզի նպատակ դրած յարաբերութեանց պարագայէն դուրս կը մնայ պատմութեան այս մասը: Բայց այդ արգելք մը չէ վենետաց, մանաւանդ թէ պատկառելի ու նուիրական հրապոյր մը պէտք է ըլլայ՝ յամայացեալ ամուսն փնտռել գտնել եթէ ոչ այն հրապարակներն ուր սփռեցին և ժողովեցին մթերս ոսկւոյ և արծաթոյ, այլ գէթ անոնց խորքը՝ ուր կը հանդիպին ոսկերք մ գիտէ քանի հարիւրաւոր իրենց հայրենակցաց. և բրելով թերեւս քիչ մը զհող այնքան բազմակոխ գետնոյն ի հարց իւրեանց, յերևան գան՝ Ատանայի սուրբ Մարկոս եկեղեցւոյն և ժողովատեղւոյն (loggia) աւերակաց տակ՝ վէմք արձանադրեալք, կրելով վրանին այնպիսի ընտանեաց անուանք որ հիմայ սպառեր անհետացեր են, և կամ ցոյսոր կը լսուին դեռ եւս ի վենետիկեան հրապարակի, ոչ անկորուստ ի նախկին գեղոյն, այլ այն ատենուան ճոխութենէն կապտեալ բազդին սայրասուր թևօքը գծուելով և պատկառելի դէմք զշնոյին Ագրիոյ:

Թողլով զհետս վենետաց ի Հայս՝ յայնմ պարագայի, դառնանք ի վենետիկ յուզել զհետս Հայոց ի քաղաքին յայն միջոց ժամանակի: Արդէն յաճախ յիշատակեցինք Հայոց դեսպանաց երթեւեկը յիշխանանիստս այս շահաստան, բայց ոչ զհաստատուն բնակութիւն Հայոց աստէն և կամ ուրիշ տեղ և զգործ: Սակայն և լուծիւնն բաւական չէ կարծեցընել տալու, թէ Հայք եղած կամ թողուցած չըլլան իրենց յիշատակներն ի վենետիկ, մինչ նոյն ԺԳ. և ԺԳ. դարուց

միջոցին՝ աւելի քան յերեսուն քաղաքս խտալիոյ թողեր են եկեղեցեաց կամ ուրիշ հետք, ուր նուազ քան ի վենետիկ էր իրենց շահն և առ ընչութիւնն. յայսմ մասին՝ վենետիկ իրենց համար առաջին քաղաքն էր յիտալիա, ինչպէս Հռովմ՝ ուրիշ տեսակէտով. և թէ այդ պատճառաւ կանխած ալ ըլլայ Հայոց երթեւեկն ի Հռովմ, հաւանա-կան է որ հոն երթալու ատեննին՝ յաճախ ընդ վենետիկ կ'ըլլար ի-րենց անցքը, նաև յառաջ քան զՊարագայն՝ որոյ սկզբնաւորութիւ-նը երեքտասաներորդ դարուն դրինք, կամ ընդ Լեւոնի մերոյ Մեծի, որ զայն դար (epoca) պսակեց՝ տուած Պարգեւազրաւը՝ և թէպէտ դեռ յայտնուած չըլլան՝ բայց անտարակուսելի է որ իր անկէ ետըը վարած տասնութին տարուան թագաւորութեան միջոցին եղած են երթեւեկը դեսպանաց, եւս առաւել վաճառականաց ու նաև սոսկա-կանաց որ և իցէ պատճառաւ:

Մեր այս գրութեան սկիզբը մէջ բերինք Հասարակապետութեան պաշտօնէից բերնէն լսուած աւանդութիւն մը, թէ երկոտասանե-րորդ դարէն ի վեր եղած էր Հայոց մուտքն և այցելութիւն ի վենե-տիկ, և թէ յաջորդ երեքտասաներորդին առաջին կիսուն, այն է յա-ւուրս Լեւոնի Ա և Հեթմոյ Ա, անոնց ի քաղաքս յաճախելուն պատ-ճառաւ՝ Մարկոս Ծիանի կտակաւ թողուց իրենց Սրբոյն Յուլիա-նոսի կոչուած թաղին մէջ՝ ունեցած տուներէն մէկը. և որ յայնմ հետէ՝ վեց հարիւր երեսուն և աւելի տարիներէ ի վեր Հայոց տուն (Casa degli Armeni) կը կոչուի, ինչպէս նաև փողոցն իրենց ա-նուամբ՝ Calle degli Armeni, և մերձաւոր կամուրջն՝ հիմայ Dei Fe-rali ըսուածը, գրոց մէջ կամուրջ Հայոց (Pons Armeniorum seu Feralium) կոչուած կը գտնուի: վենետաց վաճառականութեան վը-րայ խօսող գրեթէ ամենայն մատենագիրք, և մանաւանդ հմտա-գոյնքն կը յիշեն՝ Հայոց գալտեան սկզբնաւորութիւնը և Ծիանիի կը-տակը. մենք անոնցմէ մէկուն միայն, Սանտիի խօսքերը առաջ բե-րենք. «վենետիկոյ վաճառականութեան մէջ համբաւաւոր է, ինչպէս նաև անցեալ դարուց մէջ՝ Հայոց ազգը, որ արժանի սեպուեցու ընդ-ունելութեան, բնակութեան և պաշտպանութեան ի վենետիկ: Ա-մենահին են իրենց յարաբերութիւնը ընդ վենետացիս, որով և ի-րենց բնակութեան վայրն ի մայրաքաղաքին, 1253 թուականէն ի վեր՝ և հետեւեալ տարւոյն մէջ հաստատուած կտակաւ մը, Մ. Ծիա-նի՝ եղբորորդւոյ հանգուցեալ Սեբաստիան դքսին, որ վենետ ժամա-նակագրաց վկայութեան համեմատ՝ մեծահարուստ ճոխութեամբ համբաւեալ ընտանիք մ'էր, և գութ ունենալով այդ ազգին վրայ, ու վաճառականութեան պատճառաւ երկար ատեն բնակած ըլլալով ի Հայաստան, վենետիկոյ ներքին գործակալաց կտակեց տուն մը»¹, Հին ժամանակագիրն Մուսցոյ՝ որոյ խօսքը առաջ կը բերէ Ծի-

1. Conta in aspetto di commercio veneziano e contò né decorsi se-

լիակի, շիօթելով թերեւս զՄարկոս ընդ հօրեղբօրն, կ'ըսէ թէ «Սե-
բաստիանոս Եփանի որ յետոյ դուքս ընտրեցաւ, շատ ատեն բնակեցաւ
ի Հայաստան, և յետոյ թողուց տուն մը ի Ս. Թուրիան թաղի՝ Վենե-
տիկ եկող Հայոց համար. և զայս ըրաւ նոյն կողմերը գտած լաւ ըն-
կերութեանն համար»¹:

Մեր ազգայինք որ յայլ և այլ դարս պէտք ունեցան խնդրոց ի
Եւրոպայէն, կը յիշատակեն միշտ իրենց ազգակցաց ի նպաստ ե-
ղած այս շնորհքը. և եթէ չեն սխալիր, կը ծանուցանեն կանխելով
զթուական թողլոյ Մարկոսի զտունն, իբրեւ յառաջագոյն գը-
րուած կտակաւ մը՝ յամի 1235 ի մայիսի 25, յորում կը նշանակուէր
յիշեալ թաղին մէջ տալ տուն մը ի բնակութիւն Հայոց ոչ ճոխից,
իբրու հիւրանոց (ospizio). որով տըւութեանս թուականն կը
կանխէ քան զամենայն ծանօթս բնակութեան Հայոց յայլ քաղաքս
իտալիոյ՝ նաև ի Հռովմ, ուր՝ ինձ ծանօթ թուական հաստատուն բը-
նակութեան կամ եկեղեցւոյ՝ (որ և նշանակ է բնակութեան) է 1239
տարին. թէպէտ հաւանականաբար այլ աւելի հնագոյն պէտք է ըլ-
լայ. իսկ ի վերջին և ի ծանօթագոյն կտակին որ ի 5 յունիսի 1253,
այսպէս գրուած կը գտնենք. «Տունն ուր կը կենան Հայք, (ըսել է
թէ արդէն բնակուած էր այն), — կ'ուզենք որ մշտեն շնաւորաբար
իրենց բնակատեղի ըլլայ. և ինչ որ հարկաւոր համարուի անոր նորո-
գութեան, ի մեր ստացուածոց ըլլայ այդ ծախքը... Մեր այս կամքին
յանձնակատար կը սահմանենք՝ կենդանի մնացող Ժառանգաց հետ,
զտեարս գործակալս եկեղեցւոյ Սրբոյն Մարկոսի»²:

Մարկոս Եփանի առաջնորդ և կամ մանաւանդ հետևող եղաւ Հա-
յոց ասպնջականութիւն տալու այս բարերարութեան գործոյն. վասն

coli, la nazione degli Armeni, che meritò accogliimento, abitazione e
protezione in Venezia. Antichissima è la corrispondenza loro con li
Veneziani, e quindi il loro alloggio nella Capitale. Sin dall'anno 1253
per testamento riconfermato nell'anno susseguente, M. Ziani nipote
del fu Doge Sebastiano, famiglia che per li Veneti cronisti si affer-
ma splendidissima in ricchezza, reso *ben affetto* a quella Nazione, *dalla*
lunga sua dimora, per ogetto mercantile nell' Armenia... legò alla Pro-
curatia veneta di Citra, una casa.

1. Sebastiano Ziani, che fù poi Doge, *dimorò assai* in Armenia, e
lasciò poi una casa in contrada di S. Giuliano per gli Armeni che
venissero a Venezia. E ciò fece per la *buona compagnia* avuta in quel-
le parti.

2. Domum in qua *manent* Armenii, volumus, ut in perpetuo ipsi in
ea stare debeant: et quandocumque fuerit opportunum eamdem con-
ciare, de nostris benis debeat conciare... Constituimus nostros Com-
missarios una cum reliquis superviventibus Dominos Procuratores O-
peris Ecclesiae S. Marci.

զի նոյն պատմիչք որ կը յիշեն զայդ, կը ծանուցանեն միանգամայն թէ ծերունի և հարուստ հայազգի մը՝ բնակեալ և վախճանեալ ի վենետիկ, այս կարգաւորութիւնն ըրած էր, ըստ Սանտեայ, Մ. Ծիանիէ քիչ յառաջ կամ ետքը (o poco prima o dappoi di M. Ziani). Բայց հնազոյն գրիչ մը կ'ըսէ. « Ջերմեռանդն ու ծերունի հայ մը իր կըտակաւ գումար մը դրամոյ թողած էր, յառաջագոյն իսկ քան զՄ. Ծիանի, որպէս զի տուն մը գնուի ու եկեղեցեակ մը շինուի ի փողոցին լապտերաց... ի դիւրութիւն և նպաստ ազգակցացը, որ Պարսկաստանի հեռաւոր կողմերէն կու գան»¹։ Այս խօսքերէն կը գուշակուի թէ հայ ծերունին չէր ի Կիլիկիոյ, այլ ի Մեծէն Հայոց, որ ի Ժամանակին Սէլչուկեան թուրքաց իշխանութեան կը հպատակէր, և քիչ յետոյ Մոռլ թաթարաց։ Աւելորդ կը համարիմ քննել թէ ինչպէս սոցա երկոցուն, ծերոյս և Մ. Ծիանեայ ի միում վայրի նշանակեալքը՝ Calle delle Lanterne կամ Ferali, կրնան պատշաճիլ, և իրենց տուրքն կը միանան. բայց հաւանական կ'երևնայ որ ծերունին դրամոյ գումար մը ձգած էր, իսկ Ծիանի ձրի բնակութեան տուն. բնակողաց կամ աղքատաց ծախքն կը հայթայթուէին ի տրոց ծերունւոյն։ Փափաքելի է զիւտ այս վերջնոյս կտակին, որ մեզմէ չորս դար յառաջ ի 1496՝ ծանօթ էր Հայոց, և ցուցեր էին ուր որ հարկ և պատշաճ էր, ինչպէս կ'ակնարկեն նոյն գրչին հետեւեալ խօսքերը. «Ծերունի Հայոյն ըրած կտակին զօրութեամբ, յաւուրս առաջնոյ Ծիանի տոժի, (ուրեմն անդստին ի 1174 — 9 թուականէ, որ է Ժամանակամիջոց իշխանութեան Սերաստիան Ծիանիի), նոյն Գործակալք ի հանգուցելոյն թողուած դրամովք գնեցին տուն մը ու եկեղեցեակ մի ի փողոցի լապտերաց ի դիւրութիւն Հայոց որ ի վենետիկ բնակելու կու գային»²։

Շարունակելի

1. Un vecchio Armeno lasciasse con suo testamento certa somma di denari, prima ancora di M. Ziani, acciocchè fosse comperata una Casa, e fabbricata una Chiesetta nella calle delle Lanterne... per comodo ed utilità de' suoi nazionali provenienti da quelli lontane parti della Persia.

2. Il testamento fatto dal vecchio Armeno al tempo del primo doge Ziani, in forza di cui essi Procuratori aveano co'denari del defonto, comperata una Casa e fabbricata una Chiesetta nella calle delle Lanterne a comodo degli Armeni che venissero ad abitare in Venezia. Կը յիշէ զայս և Կալիշիոյի, (Բ, 275) Mentre il Zen (Caterino) era nella sua ambasciata (յամի 1473) edificossi una piccola Chiesa loro.

